

Երեկոյեան պաշտամունքին կամ «շաբաթի փակում»-ին կ'աւելցենեւ աղօթքներ, զորս կ'երկարեն ի սէր գեհեկնի հողիներուն, որոնք, ինչպէս կը հաւատան, հանդիստ կ'առնեն ու կը յաղեցնեն իրենց ծառաւը այնքան ատեն՝ որքան տեւէ շաբաթը:

Պաշտամունքէ դարձին՝ ընտանեօք կը փակեն շաբաթը Հաբդավանով, որ կը նշանակէ «բաժանում սուրբ օրերու անսուրբ օրերէն»: Նախ ճրագ մը կը վառեն. ապա ընտանիքին պետը բաժակ մը մինչև բերանը կը լեցնէ գինիով ու միւս ձեռքով կը բռնէ անուշահոտ տունկ մը. յետոյ կ'օրհնէ գինին ու անուշահոտ տունկը՝ և կը հո-

տատէ զայն. կ'օրհնէ նաև ճրագը, ու ներկաները կ'ըմպեն գինին ու անոր վերջին կաթիլներէն մէկ քանին գետին կը հեղուն՝ ի նշան ուրախութեան. մնացեալ կաթիլները ճրագին վրայ կը սրսկեն ու կը մարեն զայն: Ասիկա նշան է լոյսի և խաւարի և սուրբի ու անսուրբի միջև եղած տարանջատութեան:

Վերջացնելէ առաջ ըսենք՝ թէ ազատամիտ Հրեաներէն ոմանք, ինքնակամ, կիրակի օրուան կը փոխադրեն շաբաթի հանդիստն ու պաշտամունքը՝ մասամբ կամ մտքովով:

Հայացուց՝ Մ. Ե. Ն.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՐԱՐԱԾԷՆ ԱՌ ԱՐԱՐԻԶ

Իմ վաղամեկի Գեղամ Գուշակեանին

Ա.

Դո՛ւն որ ըսիր. —
«Թող ըլլայ լո՛յս»,
Եւ քառսին մէջ բաժնեցիր
Երկինք, երկիր եւ ովկիանոս,
Մինչ բարեգոր
Լոյսիդ ի տես՝
Տարբերն այս ևնոր
Օրհնեցին քեզ.

Լսէ՛ զիս Տէր,
Շառալկերուն սակ լոյսերով
Ի՛նչ փոյք, ինչ փոյք,
Թէ մի՞ս կ'ապրիմ,
Երբ հոգւոյս մէջ խաւա՛րն ահա
Կը տարածուի, եւ օրէ օր
Կը քանձրանայ.

Բարի լոյսէդ շո՛ղ մը միայն
Թող քափանցէ հոգիէս նե՛րս.
Ջաղջախ ՀԱՒԱՏՔԻն հոն որպէսզի
Ո՛յժ ըսանայ:

Բ.

Դո՛ւն որ ըսիր. —
Ուս գիշերին
Թող շողողան աստղեր բազում,
Արալոյսին՝
Կարկիւնեուն սակ ամազուն՝
Անձրեւածին՝
Երկինք զրկէ ծիածանով
Երկիր ու ծով,

Լսէ՛ զիս Տէր,
Աստղերով սակ

Ի՛նչ փոյք, ի՛նչ փոյք,
 Թէ՛ շարունակ
 Կը քափառիմ.
 Երբ մըշու՛ց կայ
 Իմ հոգւոյս մէջ մըշու՛ց խորին,
 Եւ ամէն ինչ կը մահանայ.
 Ծիածանէ՛դ երա՛նգ մը լոկ
 Պարզէ՛ յոգնած սրտիս վերեւ,
 Յամբող ՅՈՅՍը հոն որպէսզի
 Նորէ՛ն գրլզլայ:

Գ.

Գուն որ ըսիր. —
 Երկրի վըրայ
 Թող պըտաւա՛ս անին ծառեր,
 Զեփիւն յուշիկ երբ համբոյր տայ
 Թող դողդողան վարդի քերքեր,
 Եւ բնութիւ՛նն յաւերժանայ
 Գոյնի բոյրի մէջ տարւոյն,

Լսէ՛ զիս Տէր,
 Ծաղիկներուդ բուրումներով
 Ի՛նչ փոյք, ի՛նչ փոյք,
 Կ'ըլլամ գինով,
 Եւ կը գըտնեմ ծառերուդ տակ
 Մի՛՛ս հովանի,
 Զէ՞ որ հոգիս է աւերակ
 Եւ ամայի,
 Ծաղիկներէ՛դ փո՛ւնջ մը միայն
 Նետէ՛ նըւաղ իմ սրէս ներս,
 Մարող Սէ՛րը հոն որպէսզի
 Նորէ՛ն բըրնկի՛:

2 Յունիս, 1934

Դ.

Գո՛ւն որ ըսիր. —
 Թող ըլլայ կե՛անք,
 Շընչող անձայն տարրերէն ետ՛
 Թող երեւա՛ն
 Նախասխալար կենդանիներ.
 Թուլասարրեր եւ գեռուններ,
 Խեցեմորքներ եւ միջասներ,
 Բարձրութեան մէջ ստառոնայած
 Թըշնագգիներ,
 Ծովերուն մէջ ի լիւղ եկող
 Անքիւ ձուկեր,
 Անտառներուն մէջ սուրացող
 Բիր գազաններ,
 Եւ ամէնուն վըրայ իշխան՝
 ՄԱՐԳԻ, համաձայն՝
 Պատկերիդ սուրբ, վե՛հ, գերիվեր,

Լսէ՛ զիս Տէր,
 Ի՛նչ փոյք, ի՛նչ փոյք
 Թէ՛ մի՛ս կապրիմ հսկայ շարժման,
 Լոյսի, գոյնի,
 Լոյսի՛ բոյրի,
 Լոյսի՛ ձայնի
 Ծո՛ցն յախտեան,
 Երբ սրտս մէջ
 Կայ լուսին դամբանային,
 Երբ իմ հոգիս է գերեզման
 Կիսակործան.
 Քու կենարար շունչէ՛դ միայն
 Շո՛ւնջ մը հոսէ՛ իմ սրէս ներս
 Նոր ուժերով եւ որպէսզի
 Կեանքի՛ն դառնամ:

ՀՐԾ. ԳՍ.ՋՍ.ԲԵՆՅ

